

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Ր Ա Ն
Մ Ե Մ Ի Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ
ԱՆԹԻԿԻԱՍ — ԼԻԲԱՆԱՆ

Անթիլիաս, 20 Դեկտեմբեր 1965

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Բարեխիստ Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամեն. եւ Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան Տօնին առթիւ Ձերդ Ամենապատիւութեան կը ներկայացնեմք Մեր սրտայից ջերմ շնորհաւորութիւնները:

Ի խորոց սրտի Մեր մաղթանքն է որ Ամենաբարին Աստուած պարգեւէ Ձեզի մշտադիւր առողջութիւն եւ երջանկայից երկար կեանք:

Կ'ազօրեմք որ Խաղաղութեան Իշխանը, Տէր Յիսուս Քրիստոս, խաղաղութիւն շնորհէ աշխարհի համայն մարդկութեան եւ ամշարժ ու առաստման պահէ ու պահպանէ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, մեր մուկապետական Ս. Աթոռները եւ հաւատացեալ Հայ Ժողովուրդը ի խնամա մարդասիրութեան Իւրոյ:

Մնամ եղբայրական սիրոյ ջերմ ողջունելու

Ազօրակից

ԽՈՐԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Դեկտեմբեր 13, 1965

Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Բարեբան Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ամառորի եւ Ս. Ծնունդի ուրախ առիթներով, հանեցէք ընդունիլ մեր, Տիկին Մանուկեանի եւ Հ. Բ. Բ. Միութեան Կեդրոնական վարչութեան անդամներու սրտագին շնորհաւորութիւններն ու որդիական մաղթանքները Ձերդ Սրբազնութեան արեւշատութեան եւ Ս. Աթոռիդ անսասանութեան ու բարօրութեան համար:

Կրնաք վստահ ըլլալ թէ մօտէն կը շահագրգռուինք Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մայրավանքի աստուածահաճոյ եւ կրթամուէր գործերով, որովհետեւ Դուք եւ Ձեր գիւնտերեալ միաբանութիւնը ոչ միայն քաջաբարեւ պահակն ու պաշտպանն էք մեր դարաւոր իրաւունքներուն Ս. Քաղաքին մէջ, այլ՝ որպէս Սաղիմական նախնայայտ հոգեւոր հայրեր, կոչուած էք վրձնական դեր մը կատարելու ամէնու ազգայնականացման ջանքերուն յաջողութեան մէջ, ի սփիւռս աշխարհի:

Նոր Տարուան սեմին՝ Նորին Ամենապատուութեանդ կը մաղթեմ քաջառաջ կեանք եւ արեւշատութիւն, ինչպէս նաեւ սրտագին յաջողութիւն՝ Ս. Աթոռիդ շինարարական աշխատանքներուն եւ կրթական գործին:

Յարգալիք գգացումներով
եւ

համբարելու Ձեր Ս. Աշոյն

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ